



խանակեաց, Բաղում ամրոցս և զղեակս շինեաց, յորով վանորայս և աղքատանոցս կազմեաց, և դոտեացն տունս և ոռճիկս պարզեցեաց, և բարութեամբ զաշխարհն իւր կելցւոյ Զոր զբարեգործութիւնն նորա լուեալ թագաւորք երկրի՝ ստիպելն զնա թագ առնուլ։ յորոց և Ուսիրուրն (18) Քր ռանդաց (Ալամանաց գրէ Պատմագիրն Սմբատ), և կայսրն Յունաց առաքեցին նմա թագ և զանձ բաղում (19)։ Եւ նա ընկալեալ զայն աշխարհաժողով բազմութեամբ և Եկեղեցւոյ լրութեամբ, պատկեցաւ թագաւոր Հայոց, և նորոգեաց զամբոս և զգաւազան թագաւորութեան Թորգոմայ, և կելց խաղաղութեամբ զաշխարհ և բարութեամբ իրրեւ զգրախոս պտղաւետեալ (20)։ ամուսնացոյց զգուստր եղբօր իւրոյ յԱնտիոք, և ապա

քաղաքին իշխանը կամ սուլթանը՝ ինչպէս Վահրամ կը գրէ, բաղում ոսկի տուաւ փոխարէն և հաշտութիւն խօսեցաւ երդմամբ և դաշմար. Այս եղաւ Հայոց Ուն. և Փրկչ. 1185 թուականին մէջ։

(18) Եւ Բագրատունի կամ Ուսիրուրն այս է՝ Եւթիմիոս կամ Եւթիմիոս (Կոյս)։

(19) Մինաս Վարդապետ Համբեցի պատմարան (որ եթէ ուրիշ Մինաս Վարդապետ Համբեցի եղած չէ ի ՌՃԽ)։ Թուականին Հայոց—Փրկչ. 1698 թ. — ինչպէս չկարծեմք լինիլ, Ս. Երուսաղէմի Պատրիարք եղաւ, զորոյ պատմարանութիւն իրրեւ նախնայ ժողովրդական փոխարէն արդէն ի լոյս ընծայած եմք՝ այս ամօթիւ հետեւեալ համառօտութեան կը տեղեկացուցանէ զմեզ։ Վիսիթրաթօն Փոսնկաց և կայսրն Յունաց թագ առաքեցին սմա (Լեոնի Բ.)։ Մակարոնցին արքեպիսկոպոսն եկն ի Պապէն հրամանաւ արքային Փոսնկոյ՝ յԱղիպոսէ՝ և օծին զնա Արքայ։ Եւ լուեալ արքայն Սիստրոսի զբոյրն իւր Սպասել ի կնութիւն ետ նմա, և Պայսերքն իւր տնտեսն Արքայն Սիստրոսի (Եւն կամ Բագրատունի) առաքեցին սմա, զոր բարձեալ ի վերայ գրօշն իւրոյ առաջի իւր ընթանայր, եւ այս նշան գրօշն տակն հանեալ մնաց ի Հայս մինչ ի սպառել թագաւորութեանս Սիստրոսի։ Բոկ առաջին թագաւորքն Հայոց որ ի հիւսիս շրջէն նշան թագաւորքն Հայոց որ ի հիւսիս շրջէն նշան կրէին, (տես Մին. Վ. Հ. Աղգարան՝, երես 42, տող 6—20)։

(20) Կարծես թէ՛ յիշատակարանիս հեղինակը և Վահրամ միւսնոյն անձն լինի, ըստորում խաղաղութեան միջոցն իմաստը և բառերը և պատմութեան ընթացք կը գործածուին յիշատակարանիս և Վահրամայ պատմագրութեան մէջ՝ ինչպէս և աստ՝ Եւթիմիոսի պատմութեան, զոր տես Վահրամայ պատմ. մէջ յերես 215 ի տողն

առեալ զԱնտիոք ետ նմա՝ և որդւոյ իւրոյ, այնմ որ Բրինձ Ռուբէն կոչեցաւ։ Եւ առ զԵրասուս և զՊաղրաս, տիրեաց և Լամբրոսին։ Յետ աւուրց եկն ի վերայ նորա սուլթանն Հոռոմոց Բալասյուզըն (21) և պաշարեաց զղեակն զՊապանն, ըմբռնեաց և զիշխանն Հայոց և զորագլուխն զպարոն Սոստանդին։ Իսկ արքայն Լեոն առեալ զմնացեալ զօրս իւր, ասպատակեաց յաշխարհն Գամբաց, և բաղում ոճիրս գործեաց և առեալ զառ և զաւար դարձաւ ի Սիսիկիայ։ Զոր լուեալ Բալասյուզըն, եթող զՊապանն և զերկիր թագաւորին և ամօթով դարձաւ յաշխարհ իւր, ընդ սակաւ զնոց դարձոյց զիշխանն և սէր երդմամբ ետ ընդ արքային Լեոնի (22)։ Բայց արքայն Լեոն

17րդ, Ուստի հարկ կը լինի ասել, կամ Վահրամ իւր նիւթերը ըստ մեծի մասին այս յիշատակարանէս քաղած է, կամ յիշատակարանս ի Վահրամայ, և կամ երկուքն ևս Վահրամայ գրուածքն լինի, ըստորում շարադրութեան մէջ բաւական մերձաւորութիւն կ'երևի։ Բայց այս վերջինը այնքան հաւանական լինիլ չուսում, որովհետեւ Վահրամ հրամանաւ Լեոնի Գ. թագաւորի գրած է, իսկ յիշատակարանս՝ նորին աւագ որդի Պ Հնթմոյ հրամանաւ, (որ զինի հօրն թագաւորեց)։ Եւ ինչ հարկ կ'ստիպէր, չգիտեմք, որ հայր և որդի՝ առանձին առանձին պատմութիւններ գրել տային Վահրամին՝ միայն իւրեանց իշխանական ցեղին և անցից համար, Ուստի սա այնքան դժուար չէ հաւատալու, զի գուցէ Վահրամ և յիշատակարանիս հեղինակ՝ ընդ միմիանս խիստ լաւ ծանօթ և բարեկամ գտնուած լինին, և խօսակցութեանց մէջ ի միմեանց նիւթ քաղած, ապա թէ ոչ արդեօք ներկի կը լինի մեզ ասել, եթէ գուցէ՛ Հնթմոմ ինքն շարադրած լինի և ուրիշը մաքուրը արտադրած ճաշոյցն ի վերջ։

(21) Յայտնի է թէ՛ (Յունաց պատմագիրներէն Բագրատունի կամ Եւթիմիոսի կողմէ) Իզդէտ—տին—Քէյքաւուզ Սեղճուկեան՝ ոչ Յունաց, այլ Իկոնիոյ սուլթանն էր։ Սակայն ինչպէս յառաջագոյն ասացաք, Իկոնիա Յունաստանի մէջ լինելով, մեր պատմագիրներէն ոմանք, և կամ գուցէ նոյն իսկ սուլթաններու հռչակահարութիւններէն լած՝ կը կարծեն նորա (Իկոնիոյ) սուլթանները Իզդէտ և Քէյքաւուզ Հոռոմոց, ուստի և կը գրեն Ուստի Հոռոմոց։

(22) Լեոն Բ. թագաւորի Իզդէտ—տին—Քէյքաւուզի հետ կ'արած պատերազմին վերայ միմիայն Սմբատ թէ և սակաւ ինչ մօտիկ ժամանակաւ, սակայն սխալ տեղեկութիւն կը տայ, և կամ (եթէ ներկի է կարծել)՝ օրինակողաց ձև



Թագաւոր Հայոց, Եւ եղև բարերարդդ և անուանի առ ամենեւեմն: Ծնաւ այս արքայ Հեթում ի Թագուհւոյ իւր Զապելէ զԼեւոն, որ այժմ է Թագաւոր, և զեղբայր իւր զԹորոս, որ խողխողեցաւ զօրացն Հազարացւոց 26), և դստերս բազումս 27). և Աստուածահաճոյ կենօք կային ի Քրիստոս: Իսկ ի վախճան կենաց հասնալ Թագուհոյն բարեպաշտի փոխեցաւ ի Քրիստոս, և եղև կայ ի սուրբ ուխտն ի Դրազարկն:

Յայնժամ արքայն Հեթում խորհրդածեալ զխաղաղութիւն աշխարհիս Հայոց, յուղի անկեալ զնաց 28) առ աղին Մուղալ, զոր Թաթարն կո-

կին չ'թողատրած լինին յիշել զՓիլիպպէ: Եւ յս խիստ հաւանական լինել կարելի է:

(26) Հեթում ոչ երկու՝ այլ երեք որդի ունեցաւ յիշխարէթ Թագուհւոյ. ա) Լեւոն. բ) Թորոս և զ) Ռուբէն: Վերջինը տղայ հասակաւ վախճանեցաւ, զոր միայն մեր յիշատակարանը կը մոռանայ յիշել, և չ'գիտեմք ինչո՞ւ:

(27) Ըստ Վահրամայ՝ հինգ դուստր ունեցաւ Հեթում Եւ. Թագաւորն Հայոց:

(28) Հ. Մ. Չամչեան ի պատմ. Հայ. հատ. Գ. յերես 248. 249. Հեթում Եւ. Թագաւորին առ Մանգոյ խանն Թաթարաց երթալն յիշելով (յաւմի Տեառն 1254 և Հայոց 2Գ)՝ սիրոյ և միաբանութեան դաշինք կրելոյ համար ընդ միմիանս, նա և յերես 250 կը գրէ, թէ այս ծանապարհօրութիւն կամ երթևեկութիւն Հեթում Եւ. մինչև վերադարձաւ յերկիր իւր ի Վիլիկիա ի Սիս, մի տարի և չորս ամիս տևեց: Սակայն ինչպէս և Չամչեանն կը յաւելու անդ, Վահրամ Վարդապետ՝ որ աւելի տեղեակ կարէ լինել անձամբ այս անցքի, չ'բռնէ կը գնէ (տես յերես 220). նա մանաւանդ "և զամս չորս անդէն կացեալ" ասելէն սա ևս պէտք է հետեցնել՝ եթէ չ'սխալեմք, առանց հաշուելոյ երթևեկութեան միջոցները, միայն չորս տարի (անդէն էլ) Մանգոյ խանին մօտ մնացած հարկ է լինել, և թէ այսպէս է, մանաւանդ Հեթում Պատմիչին գրածին ևս նայելով՝ որ էրէ՛ և ի՞նչ տարի կը գնէ, և որ աւելի մերձ և համաձայն կարելի է ասել Վահրամին գրածին, ուրեմն բաւական տարրերութիւն կայ Չամչեան Հ. Միքայէլի և սորա գրածին մէջ, Իցիւ թէ՛ մեր յիշատակարան ևս զայս յաւելոյր իւր լուրմանդակութեան համապատասխան մէջ. և յայնժամ զայս լուրման յանձնած է: Մենք առայժմ զայս լուրման բաւականացած, կը թողուք ժամանակին, որ գուցէ այլոց գրուածոց միջոցաւ և համաձայնութեամբ կը պարզուի:

չեն. և յուստ մտեալ ընդ նոսա, զմշտնջնաւոր խաղաղութիւն այսու ստացաւ աշխարհի իւրոյ ի նոցանէ, որ ապականէին զամենայն աշխարհ: Յայնմանէ լցեալ նախանձու պաշտօնեայքն Մահմէտի, ամենայն ուստէք նիւթէին զննդութիւն ի վերայ Հայոց:

Եւ նա օգնութեամբն Աստուծոյ, և ձեռնտուութեամբ Մուղալ զօրունէ առ զմեծն Գերմանիկէ և զՊեհլեանի. Թափեաց և զնախնեաց իւրոց զաշխարհ զյափշտակեալն յայլոց, Եւ մինչ կայր աշխարհ Հայոց ի հաշտութիւնն Աստուծոյ և ի բարութիւնն, յայնժամ բազմապատիկ մեղք լցեալ աղգ մարդկան ձեցելն ի վերայ ինքեանց զարժանաստութեան Եւստուծոյ. յորմէ եղև զօրացեալ աղգն Հազարացւոց. և բռնակալեաց ոմն ծառայ յեղիպտոս, և տիրեաց ամենայն տանն Սեմայ. և շարժեցաւ ընդդէմ՝ քրիստոնէից, աւերեաց զծովեզերեայսն. քակեալ կործանեաց զմեծն Անտիոք. զերեաց անհամար անձինս քրիստոնէից, և զանթիւս մաշեաց ի սուր սուսերի:

Բայց յառաջ քան զայս կեն ի վերայ Թագաւորին Հեթում և տանս Հայոց. վանեաց զօրսն Քրիստոնէից. եսպան զԹորոս զորդին Հեթում Թագաւորի, և զմեծն Լեւոն՝ որ այժմ է Թագաւոր, յիս բազում քաջութիւնս կատարելոյ նորա՝ ըմբռնեաց զնա ի գերութիւն: Վասնորոյ և յայնմանէ համարձակեալ եմուտ յաշխարհ Հայոց և հրկիզութեամբ ապականեաց, և զենակիւն ի սուր մաշեաց, զառ և զաւար առեալ՝ ել ողջամբ և գնաց յաշխարհն իւր:

Բայց որդի Թագաւորին Լեւոն՝ ոչ զանդիտեալ ի ծառայութենէ Իսմայէլացւոցն, այլ պինդ հաւատով և արիագոյն սրտիւ կացեալ ի գերութեանն, նախ բանիւք քաջալերէր զենակիւս որ յամրոցս աշխարհիս գայթաղեալք էին, պինդ կեալ և ոչ տալ ի ձեռս: Եւ ապա ի յանդիման լինիլն Սուլթանին, զարմացոյց զամենեւին իմաստուն բանիւքն և ահարկու կայիւքն, պատրաստ զողով ի հարցմունսն և ի պատասխանին: Եւ և ի ձիրն թացս ասպարհիս ելեալ ընդ Սուլթանին, առաւելագոյն դատաւ քան զամենայն զինուորսն ի հրահանգս ձիաւարժութեան, մինչ զի յամենայն զործս և ի բանս նորա հաճեալ և հաւանեալ

